



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ 18.12.2014թ. թիվ 35/8-Լ
ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ «ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ»
ԿԱՐԳՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Արա Զոհրաբյանի, խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Հարություն Հարությունյանի, Նելլի Հարությունյանի և Կարեն Սարգսյանի,

քննության առնելով Պալատի խորհրդի 18.12.2014թ. թիվ 35/8-Լ որոշմամբ հաստատված «Փաստաբանների վերապատրաստման» կարգում (**այսուհետ նաև Կարգ**) փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին հարցը,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 15-րդ կետի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի, 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերի, 3-րդ և 5-րդ մասերի, 6-րդ մասի առաջին նախադասության պահանջներով, միաձայն

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1) Կարգի 12 կետի 2-րդ նախադասությունը «ժամից» բառից հետո լրացնել « , բացառությամբ սույն կարգի 11-րդ կետում նշված փաստաբանների, ովքեր նախապես դիմում են ներկայացրել պարտադիր վերապատրաստման բոլոր ժամերն առցանց ձևով լրացնելու մասին» նախադասությամբ:

2) Կարգի 18 կետի «գ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«գ) ՀՀ փաստաբանների պալատի, Փաստաբանական դպրոցի, ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի կողմից հավաքարմագրված կամ ՀՀ փաստաբանների պալատի կողմից ընդունելի վերապատրաստում իրականացնող այլ կազմակերպության անվանումը,»:

3) Կարգի 19 կետում «մեկից մինչև չորս (ներառյալ) ժամը» արտահայտությունը փոխարինել «յուրաքանչյուր ակադեմիական ժամը» արտահայտությամբ:

4) Կարգի 20 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Փաստաբանական դպրոցի ունկնդիրների, անկախ վերջիններիս քանակից, պրակտիկան (փորձուսուցումը) փաստաբանի կողմից լրիվ ծավալով ղեկավարելը հավասարեցվում է վերապատրաստման համար նախատեսված 12 (տասներկու) ժամի՝ յուրաքանչյուր կիսամյակի համար: Նշված ժամերը հաշվարկվում են այն կիսամյակի համար, որի ընթացքում արձանագրվել է փաստաբանի կողմից ունկնդրի պրակտիկան լրիվ ծավալով ղեկավարած լինելու (պրակտիկայի ավարտի) փաստը:»:

5) Կարգի 22 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Փաստաբանների՝ արտերկրում վերապատրաստման կամ այլ ուսումնական դասընթացներին (սեմինարներին) մասնակցության ժամերը ՀՀ փաստաբանների պալատի նախագահի կողմից կարող են ներառվել (հաշվարկվել) փաստաբանի պարտադիր, իսկ համապատասխան վճարման անդորրագրի ներկայացման դեպքում նաև լրացուցիչ վերապատրաստման ժամաքանակում՝ կախված դասընթացի թեմայից և դասընթացավարից կամ դասընթացը կազմակերպող ուսումնական հաստատությունից:»:

6) Կարգի 23 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամների (ինչպես նաև խորհրդի նախագահի), հաշվիչ հանձնաժողովի անդամների, որակավորման հանձնաժողովի փաստաբան անդամների, ՀՀ փաստաբանների պալատի կողմից ձևավորած հանձնաժողովների (աշխատանքային խմբերի, այդ թվում՝ ժամանակավոր), ինչպես նաև ՀՀ փաստաբանական դպրոցի խորհրդի փաստաբան անդամների կողմից խորհրդի և հանձնաժողովի (հանձնախմբերի, աշխատանքային խմբերի) նիստերին (այդ թվում՝ որակավորման քննություններին, աշխատանքներին, քննարկումներին) մասնակցության երեք ժամը հավասարեցվում է վերապատրաստման մեկ ժամի: Այն դեպքում, երբ հնարավոր չէ ճշգրիտ հաշվարկել նիստի տևողությունը, ապա մեկ նիստը հավասարեցվում է վերապատրաստման մեկ ժամի: Փաստաբանների կողմից ՀՀ փաստաբանների պալատի ակումբի նիստերին մասնակցելու ժամերը համամասնորեն հաշվարկվում են որպես պարտադիր վերապատրաստման ժամեր:»:

7) Կարգը լրացնել նոր՝ 23.¹ կետով՝ հետևյալ բովանդակությամբ. «23.¹ Փաստաբանի դիմումի հիման վրա վերապատրաստման դասընթացներին հավասարեցվում է փաստաբանի կողմից մասնագիտական գիտական աշխատության կամ ձեռնարկի կամ դասագրքի հրատարակումը, ինչպես նաև գիտաժողովի մասնակցությունը, եթե ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի կողմից կազմավորված գիտամեթոդական հանձնաժողովը բավարարել է փաստաբանի դիմումը: Սույն կետում նշված հանձնաժողովը կազմավորվում է երեք փաստաբան անդամից և գործում է երկու տարի ժամկետով:»:

8) Կարգի 29 կետը լրացնել նոր՝ 7-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ. «• **պետական կամ հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատության դասախոսներին՝ համապատասխան փաստաթուղթ ներկայացնելու դեպքում.**»:

9) Կարգի 29 կետը լրացնել նոր՝ 8-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ. «• **կարգապահական գործ նախապատրաստող անձանց.**»:

10) Կարգի 36 կետում «յուրաքանչյուր տարի (հունվար-դեկտեմբեր)» արտահայտությունը փոխարինել **«երկու տարվա ընթացքում»** արտահայտությամբ:

11) Կարգը լրացնել նոր՝ 40 կետով՝ հետևյալ բովանդակությամբ. «**Սույն կարգի 36-րդ կետում նշված երկու տարվա ժամկետի հաշվարկը սկսվում է 2017 թվականի հունվարի 1-ից.**»:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝

Արա Զոհրաբյան

21 դեկտեմբերի 2016թ.
թիվ 26/5-L
ք. Երևան